ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/01/21

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 18 մարտի 2021թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Լ. Ալեքսանյանի, Ն. Համբարձումյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2021 թվականի մարտի 18-ին քննության առնելով Բարձրագույն դատական խորհրդի անդամ Վիգեն Վլադիմիրի Քոչարյանի նկատմամբ 2021 թվականի փետրվարի 10-ի 05 որոշմամբ հարուցված ՎԻՎ/01/21 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑ

Ի. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1. Վիգեն Վլադիմիրի Քոչարյանը «Հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույքի, եկամուտների եվ փոխկապակցված անձանց» հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի դրամական միջոցները» բաժնում հայտարարագրել է տարեվերջի դրությամբ առկա 1,050,000 ՀՀ դրամ:

139

«Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի «Բ.6.3.-Կանխիկ դրամ» ենթաբաժնում տարեսկզբի դրությամբ հայտարարագրել է 1,050,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոց, իսկ նույն հայտարարարգրի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» ենթաբաժնում 266,120 ՀՀ դրամ բանկային հաշիվների մնացորդ:

2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» բաժնում արտարժույթով դրամական մնացորդ չի հայտարարագրել: ՀՀ կենտրոնական բանկից ստացված տվյալների համաձայն՝ Վիգեն Վլադիմիրի Քոչարյանի բանկային հաշիվներին 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա եղել է 1,383.97 եվրո մնացորդ, որը սակայն չի ներկայացվել հայտարարագրում:

2. Հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ 2021 թվականի հունվարի 21-ին Վիգեն Վլադիմիրի Քոչարյանի մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 01/21 արձանագրությունը, որի ընթացքում Վիգեն Վլադիմիրի Քոչարյանը ներկայացրել է բացատրություն:

II. Վիգեն Վլադիմիրի Քոչարյանի բացատրությունները

2.1. Հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ Վիգեն Վլադիմիրի Քոչարյանը 2020 թվականի սեպտեմբերի 16-ին ներկայացրել է հետևյալ պարզաբանումները և բացատրությունները.

- Վիգեն Վլադիմիրի Քոչարյանի համոզմամբ 2018 թվականի հայտարարագրում 266,120 ՀՀ դրամի անհամապատասխանություն առկա չէ, քանի որ տվյալ տարվա հայտարարագրում խոսքը գնում էր դրամական միջոցների մասին

առանց տարանջատման «բանկային հաշիվների մնացորդների» և «կանխիկ դրամի», ինչի պահանջը տեղ է գտել միայն 2019 թվականից լրացվող հայտարարագրերում: Համապատասխանաբար, 2018 թվականի հայտարարագրում նշված գումարը (1,050,000) ներառում էր ինչպես կանխիկ դրամը, այնպես էլ «աշխատավարձի քարտի վրա առկա 266,120 ՀՀ դրամը:

- Վերոնշյալ կետի տրամաբանությամբ Վիգեն Վլադիմիրի Քոչարյանի բանկային հաշվին 2019 թվականին հունվարի 1 ին առկա 1,383.97 եվրո մնացորդը ներկայացված է ինչպես 2018 թվականի այնպես էլ 2019 թվականի հայտարարագրում և մաս են կազմում հայտարարագրված 3,200 եվրոյի: 2020 թվականին հայտարարագիրը լրացնելիս Վիգեն Վլադիմիրի Քոչարյանը չի մտաբերել և չի վերստուգել 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ եվրոյի քարտային հաշվին գումարի առկայությունը: Դա պայմանավորված է նրանով, որ այդ հաշվից օգտվում է հազվադեպ, տարին մեկ-երկու անգամ, որպես կանոն, երբ այդ հաշվին արտասահմանյան գործուղումից հետո հրավիրող կողմերը կատարում են ավիափոխադրման և հյուրանոցային ծախսերի փոխհատուցում:

2.2. 2021 թվականի հունվարի 21-ին թիվ 01/21 ՎԻՎ արձանագրությունը կազմելիս Վիգեն Վլադիմիրի Քոչարյանը որպես բացատրություն ներկայացրել է 2020 թվականի սեպտեմբերի 16-ին գրավոր ներկայացրած պարզաբանումները:

2.3. 2021 թվականի մարտի 17-ին կայացած գործի քննության նիստի ընթացքում Վիգեն Վլադիմիրի Քոչարյանի լիազոր ներկայացուցիչ Ալեքսանդր Սիրունյանը ներկայացրել է գրավոր միջնորդություն և այն պնդել է նաև գործի քննության ընթացքում բանավոր: Ըստ ներկայացուցչի՝ եթե թույլատրելի ապացույցներով վերոհիշյալ փաստերն իրոք ապացուցված են, ապա արարքը պետք է որակել ոչ թե ՎԻՎ օրենսգրքի 169.28 հոդվածի

5-րդ, այլ 169.28 հոդվածի 3-րդ մասով, քանի որ տեղի է ունեցել ոչ թե սխալ լրացում այլ լրացման կարգի խախտում: Լիազոր ներկայացուցչի պնդմամբ արձանագրված տեխնիկական վրիպակները վարչական վարույթ իրականացնող մարմինը պետք է գնահատի օրենքի ոգու և տառի ներդաշնակ մեկնաբանությամբ և պետք է հաշվի առնի իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը («Նորմատիվ իրաական ակտերի մասին» օրենք): (...) այդ արարքները պետք է որակվեն 169.28 հոդվածի 3-րդ մասով *կամ* պետք է կիրառվի նույն օրենսգրքի 21-րդ հոդվածի կարգավորումը համաձայն որի՝ եթե կատարված իրավախախտումը նվազ նշանակություն ունի գործը վճռելու համար լիազորված մարմինը կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

III.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն, ուսումնասիրելով և վերլուծելով թիվ ՎԻՎ/01/21 գործում առկա նյութերը, ինչպես նաև հայտարարատու Վիգեն Վլադիմիրի Քոչարյանի կողմից ներկայացրած գրավոր պարզաբանումները և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու ընթացքում ներկայացրած բացատրությունները, կատարելով գործի հանգամանքների քննություն, հաստատված է համարում, որ

3.1. Վիգեն Վլադիմիրի Քոչարյանը «Հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագիր ներկայացրել է 2019 թվականի մայիսի 30-ին: Այդ հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի դրամական միջոցները» բաժնում հայտարարագրել է 266,120 ՀՀ դրամ պակաս դրամական միջոց:

3.2. Վիգեն Վլադիմիրի Քոչարյանը «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագիր ներկայացրել է 2020 թվականի մայիսի 30-ին: Այդ հայտարարագրի «Բ.6.1. Բանկային հաշիվների

136

մնացորդներ (բացառությամբ ավանդներ) բաժնում չի հայտարարգրել բանկային հաշվին առկա 1,383.97 եվրո:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1. Վիգեն Վլադիմիրի Քոչարյանը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի (2018 թվականի մարտի 23-ին ընդունված ՀՕ-206-Ն օրենք) 34-րդ հոդվածի համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին հայտարարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

4.2. Նույն օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):

4.3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշման Հավելված 2-ի («Հայտարարագրերի լրացմանը ներկայացվող պահանջները») 21-րդ կետի համաձայն՝ տարեկան հայտարարագրում լրացվում են (...) հաշվետու տարվա սկզբում և վերջում առկա արժեթղթերը և այլ ներդրումները, հանձնված փոխառությունները և բանկային ավանդները, դրամական միջոցները՝ ***առանձնացնելով*** (ընդգծումը Հանձնաժողովինն է) բանկային հաշիվներում, էլեկտրոնային հաշիվներում առկա դրամական միջոցները, կրիպտոարժույթը և կանխիկ դրամական միջոցները:

Հանձնաժողովը արձանագրում է, որ նշված իրավակարգավորման և դրա հիման վրա Հանձնաժողովի որոշմամբ սահմանված հայտարարագրերի լրացմանը ներկայացվող պահանջներով դրամական միջոնցերի՝ կանխիկ, անկանխիկ՝ բանկային հաշվին առկա դրամական միջոցների, առանձնացումը նպատակ է հետապնդել ապահովել հայտարարագրված դրամական միջոցների հավաստիության, դրանց ծագման

օրինականության, ինչպես նաև հետագայում դրանց տնօրինման օրնականության նկատմամբ Հանձնաժողովի արդյունավետ վերահսկողությունը:

Հանձնաժողովը միաժամանակ արձանագրում է, որ կանխիկ, անկանխիկ դրամական միջոցներն առանձնացված տարբերակով հայտարարագրելու պահանջն առաջին անգամ կիրառվել է 2020 թվականից՝ 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրի նկատմամբ: Այնուամենայնիվ, հայտարարտուի կողմից 2018 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրում տարեվերջին առկա դրամական միջոցների չափը չպետք է տարբեր լինի 2019 թվականի տարվա սկզբին առկա կանխիկ և անկանխիկ դրամական միջոցների հանրագումարից: Այն դեպքում, երբ արձանագրվում է նման տարբերություն, Հանձնաժողովի խնդիրն է պարզել, թե արդյոք այդ տարբերությունը հանդիսանում է դրամական միջոցների սխալ չափով հայտարարագրման արդյունք, թե դրամական միջոցներիի ընդհանուր չափը ճիշտ է, սակայն այն հայտարարագրվել է ոչ ճիշտ ենթաբաժնում:

Սույն գործի հաստատված հանգամանքներից բխում է, որ.

- Վիգեն Վլադիմիրի Քոչարյանը «Հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույքի, եկամուտների եվ փոխկապակցված անձանց» հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի դրամական միջոցները» բաժնում հայտարարագրել է տարեվերջի դրությամբ առկա 1,050,000 ՀՀ դրամ, իսկ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում կանխիկ, անկանխիկ ընդհանուր 1,316,120 ՀՀ դրամ դրամական միջոց: Հետևաբար, Հանձնաժողովն արձանագրում է, որ հայտարարագրերից մեկում տեղի է ունեցել դրամական միջոցների սխալ չափով հայտարարագրում: Ստացված բանկային քաղվածքներով Հանձնաժողովը հավաստիանում է, որ 2018 թվականի տարեվերջին Վիգեն Վլադիմիրի Քոչարյանի բանկային հաշիվներին առկա է եղել 266,120 ՀՀ դրամ: Ըստ բանկային քաղվածքների՝ 2019 թվականի տարեսկզբին առկա է եղել այդ նույն 266,120 ՀՀ դրամը: Հաշվի առնելով այն

հանգամանքը, որ կանխիկ, անկանխիկ դրամական միջոցներն առանձնացված տարրերակով հայտարարագրելու պահանջն առաջին անգամ կիրառվել է «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի նկատմամբ և այն փաստը, որ Վիգեն Վլադիմիրի Քոչարյանը լրացրել է այդ հայտարարագիրը նշված պահանջների պահպանմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ Վիգեն Վլադիմիրի Քոչարյանի այն պնդումը, որ 2018 թվականի հայտարարագրում նշված գումարը (1,050,000) ներառում էր ինչպես կանխիկ դրամը, այնպես էլ «աշխատավարձի քարտի վրա առկա 266,120 ՀՀ դրամը», չի հիմնավորվում: Այսինքն՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույքի, եկամուտների եվ փոխկապակցված անձանց» հայտարարագրում առկա է անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական լրացված տվյալ:

- 2018 թվականի տարեվերջին և 2019 թվականի տարեսկզբին Վիգեն Վլադիմիրի Քոչարյանը հայտարարագրել է 3200 եվրո դրամական միջոցներ, ընդ որում 2019 թվականի տարեսկզբին ամբողջ գումարը հայտարարագրվել է որպես կանխիկ դրամական միջոց: Գործի քննության ընթացքում հայտարարատուն պարզաբանել է, որ 3200 եվրոյից 1,383.97 եվրոն հանդիսանում է բանկային հաշվին առկա դրամական միջոց: Ստացված բանկային քաղվածքներով Հանձնաժողովը հավաստիանում է, որ ինչպես 2018 թվականի տարեվերջին, այնպես էլ 2019 թվականի տարեսկզբին Վիգեն Վլադիմիրի Քոչարյանի բանկային հաշիվներին առկա է եղել 1,383.97 եվրո, որը գոյացել է 2018 թվականի ընթացքում տվյալ հաշվով իրականացված մուտքային շրջանառության արդյունքում: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Հանձնաժողովը հիմնավոր է համարում հայտարարատուի պարզաբանումը և արձանագրում է, որ ներկայացված փաստերը վկայում են, որ դրամական միջոցների ընդհանուր գումարը հայտարարագրվել է ճիշտ չափով, սակայն այն հայտարարագրվել է

լրացմանը ներկայացվող պահանջների խախտմամբ, առանց տարբերակելու կանխիկ և անկանխիկ դրամական միջոցները:

4.4. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.5. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28 հոդվածը պատասխանատվություն է սահմանում այն դեպքերի համար, երբ հայտարարագիրը ներկայացվել է դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ, ինչպես նաև հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու դեպքում:

4.6. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն 7-րդ մասին համաձայն՝ նույն օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն փաստը, որ Վիգեն Վլադիմիրի Քոչարյանը «Հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագիր ներկայացրել է 2019 թվականի մայիսի 30-ին, ինչպես նաև ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ մասով, Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Վիգեն Վլադիմիրի Քոչարյանի՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց»

132

հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու մասով գործի վարույթը կարճել,

2. «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների խախտման հիմքով Վիգեն Վլադիմիրի Քոչարյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նախազգուշացում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վիգեն Վլադիմիրի Քոչարյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:
5. Սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո Վիգեն Վլադիմիրի Քոչարյանին տրամադրել 7 օր հայտարարագրի նկատմամբ ներկայացված պահանջների խախտումները վերացնելու համար:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ